

տուաւ Վարդապետին նաեւ «նոմոս թագաւորական կնքով ազդու եւ հատու բանիւ, թէ բարձի գհարիւր թուման մուղաղէն, զոր ի մերոց թագաւորաց եղեալ էր ի վերայ Աթոռոյն ձերոյ Էջմիածնի. այլ եւ ետու զհրաման կաթողիկոսութեան Մովսէս վարդապետին ըստ հայցուածոյ ամենայն ազգին Հայոց» :

Մեծ աշխատութիւն եւ իբր 1000 թուման արժեց այս հարկէն աղատութիւնը: Բայց երբ «սիրոեցաւ համբաւ աղատութեան Ս. Աթոռոյն յընդհանուր աշխարհ յազգս Հայոց, ամենեքեան լցեալք անպատում ուրախութեամբ ի ձայն ցնծութեան գոհանային զԱստուծոյ» (Դաւր. 309—311) :

## 16. ՄՈՎՍԷՄ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Բովանդակ հայ ժողովրդեան փափազն էր, որ Մովսէս բազմի Ամենայն Հայոց կաթողիկոսական գահը, «ձանձրացեալք յառաջին կաթողիկոսաց անկարգութենէն եւ ի սորին բարեկարգութենէն մխիթարեալք»: Այս պատճառաւ ալ «գրովք եւ աղաչանօք թախանձէին յամենայն տեղեաց վարդապետք եւ եպիսկոպոսք եւ երեւելի արք, զի յանձն առցէ Մովսէս զաստիճան կաթողիկոսութեան. բայց նա հրաժարէր զանձն անարժան ասելով առաքելական աստիճանին» (Դաւր. 307—308) :

Առաքել Դաւրիժեցի հոս իրեն աղբիւր ունեցած է Ղուկաս Գառնեցւոյ Յիշատակա-